ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՈՐԴՈՒ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՌԱԲԼՈՒՐ

12.10.2022 16:59

Հարգելի փաստաբաններ,

Հայրենիքի պաշտպանության համար՝ փաստաբանների ընտանիքների զոհված անդամների հիշատակը հարգելու նպատակով, ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ սահմանված հարգանքի տուրք մատուցելու համար, 2022 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ փաստաբանների պալատը կազմակերպել է այցելություն փաստաբան Մաի Հակոբյանի որդու՝ Հրաչիկ Ավետիսյանի շիրիմին (Եռաբլուր):

ՀՀ փաստաբանների պալատը հիշատակի օրվան մասնակցելու ցանկություն ունեցող անձանց համար կազմակերպում է տեղափոխում դեպի Եռաբլուր: Մեկնումը ՀՀ փաստաբանների պալատի շենքից (ք.Երևան, Ջաքյան 7-2), հոկտեմբերի 17-ին, ժամը 11:00-ին:

Հիշատակի օրվան մասնակցելու համար խնդրում ենք արձագանքել մինչև 2022 թվականի հոկտեմբերի 14-ը, ժամը 15:00-ն:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })